Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Յուլիս 2018
Լրատու թիւ 13

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Անի «Կարմիր»

71 կէտ

Վան «Կապոյտ»

83 կէտ

Կարս «Նարնջագոյն»

84 կէտ

Այս տարուայ յաղթող խումբը Կարսն է գերագոյն թիւով Նարնջագոյն կէտեր հաւաքած ըլլալով:

Ողջոյնի Խօսք

2018 թւականը Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի համար յոբելենական տարի է, այս տարի լրացաւ մեր սիրելի վարժարանի հիմնադրման 40-ամեակը:

Վարժարանը չորս տասնամեակներ շարունակ հոգաբարձուների, տնօրինութեան, ուսուցիչների, կրթական և ծնողական յանձնախմբի անդամների, վարժարանի բարերարների համատեղ աշխատանքի շնորհիւ, Հայրենիքից հեռու՝ օտար ափերում, կրթել և դաստիարակել է բրիտանահայ երեխաներին մեր ազգային ոգով:

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միայն հայոց լեզու և հայկական մշակոյթ փոխանցող կառոյց չէ այլ մեր երեխաների սրտերում հայրենասիրութեան հունդեր սերմանող, հայ ինքնութեան և հայկական մթնոլորդ պահող սրբազան օջախ է:

Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել, բոլոր նրանց , որոնց տքնաջան, նուիրուած աշխատանքի շնորհիւ մեր վարժարանն անցաւ այս 40 տարուայ փառահեղ ճանապարհը:

Շնորհաւորում եմ բոլորիս վարժարանի հիմնադրման 40 ամեակի առթիւ:

Աւարտուեց 2017-2018 ուսումնական տարին: Ինչպէս անցած տարիները այս տարի նոյնպէս դպրոցի համար եղել է շատ հետաքրքիր և յիշարժան:

Վարժարանի կրթական յանձնախումբն անցկացրեց այս տարուայ աւարտական քննութիւնները: Աւարտական դասարանի աշակերտները յաջողութեամբ յանձնեցին հայոց լեզուի բանաւոր, գրաւոր և կարդալու քննութիւնները:

Շնորհաւորում եմ մեր սիրելի շրջանաւարտներին, իրենց ծնողներին և ուուցչուհիներին, ովքեր տարիներ շարունակ հետևել են մեր երեխաների հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը: Մեր դպրոցի շրջանաւարտներին ցանկանում եմ, որպիսզի բոլորն իրենց արժանի տեղը գտնեն կեանքում: Մաղթում եմ ուժ ու եռանդ, նպատակների և իղձերի իրականացում և թող յաջողութիւնն ու երջանկութիւնը, լոյսն ու բերկրանքը միշտ ուղեկից լինեն իրենց: Բարի ճանապարհ դէպի նոր կեանք, սիրելի շրջանաւարտներ:

Վարժարանի այս տարուայ ամավերջի հանդէսը նուիրուած էր Վարժարանի հիմնադրման 40 (1978- 2018) և Հայաստանի առաջին հանրապետութեան և Սարդարապատի հերոսամարտի 100 (1918-2018) ամեակներին:

Օգտուելով առիթից Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի բոլոր բարերարներին, հոգաբարձուներին, կրթական և ծնողական յանձնախմբերի անդամներին, վարժարանի բարեկամներին: Շնորհակալութիւն բոլոր ծնողներին, ովքեր գիտակցելով հայկական ինքնութեան համար՝ հայեցի կրթութեան անհրաժեշտութիւնը, իրենց հանգստի ժամերը զոհաբերում են, որպիսզի իրենց երեխաները անգլիական միջավայրում հայ մեծանան: Շնորհակալութիւն մեր սիրելի ուսուցչուհիներին, ովքեր իրենց ուժն ու եռանդը չեն խնայում մեր երեխաների հայեցի կրթութեան և դաստիարակութեան համար: Ցանկանում եմ բոլորիդ ուրախ ամառային արձակուրդներ:

Վերամուտ՝ սեպտեմբերի 9, 2018

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

Ցեղասպանության Յիշատակին Նուիրուած երեկոյ

Ապրիլի 22-ին Բրիտանահայ Համայնքային խորհուրդը կազմակերպել էր երեկոյ նուիրուած Հայոց Ցեղասպանության զոհերի յիշատակի 103-րդ ամեակին:

Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը ներկայացրեց Պերճ Զէթունցեանի “Ոտքի դատարանն է գալիս” ստեղծագործութիւնը: Վարժարանի աշակերտները, շրջանաւարները, ուսուցիչները և ծնողները շատ գեղեցիկ և պատկերաւոր ներկայացրին Սողոմոն Թէիլէրեանի դատավարութիւնը: Բեմադրութիւնը պատրաստել էր ՀՀ վաստակաւոր դերասանուհի Ժենյա Ներսիսեանը:

On April 22nd an event commemorating the victims of the Armenian Genocide, organised by the Armenian Community Council in the United Kingdom, took place at St. Yeghishe Church in London as part of the events dedicated to the 103rd anniversary of the Armenian Genocide.

K Tahta Armenian Community Sunday School’s present and former pupils, teachers and parents, emotively presented "Stand up the court is coming" by Perch Zeytuntsyan. The play was produced by Mrs Jenya Nersisyan.

Աշակերտական Գիտելիքներու Մրցոյթ

Դպրոցիս Հայկական Գիտելիքներու Մրցոյթը տեղի ունեցաւ Մայիսի 6-ին, 4-րդէն 9-րդ դասարանի աշակերտներու մասնակցութեամբ: Անոնք բաժնուած էին երեք խումբերու՝ Կարմիր, Կապոյտ եւ Նարնջագոյն: Պատանիները հերթով պատասխանեցին հայոց պատմութեան, աշխարհագրութեան, կրօնքի, գրական եւ մշակութային դէմքերու վերաբերեալ հարցերուն, որոնց մասին նախորդող դասերուն ծանօթացած էին իրենց դասարաններուն մէջ: Սա տարբեր եւ գրաւիչ մանկավարժական միջոցառում մըն է, քանի որ աշակերտներուն մրցակցութեան բնազդը կ՝օգտագործէ, անոնց աւելի շահագրգրելով սորվելու մեր մշակութային արժէքներու մասին:

Աշակերտական Գիտելիքներու Մրցոյթ...Pupils' Quiz

Our annual quiz event for students was held on 6th May. Pupils from year 4 to year 9 were encouraged to participate, each child representing the house they belonged to: Ani (red), Van (blue) and Kars (orange). The pupils in each team took turns to answer questions on Armenian history, geography, religion and well-known personalities in Armenian literature and culture. The competitive nature of the activity motivated the children to answer their questions to the best of their ability and despite the age gaps within each team, even the younger members felt engaged and contributed to the answers.

Սրբազան Հօր և Տէր Շնորհքի Այցելութիւնը

Միշտ տարբեր առիթներով դպրոց կ՝այցելեն գաղութիս եկեղեցւոյ հովիւները իրենց օրհնութիւնը, աղօթքները և հայ եկեղեցւոյ սուրբութիւնները փոխանցելու դպրոցի բոլոր աշակերտներուն։
Մայիս 13-ին, Համբարձման Կիրակիի առտուն, աշակերտներու շարքի ժամուն, Գաղութիս Հոգևոր Առաջնորդ՝ Հովակիմ Եպս. Մանուկյան և Շնորհք Քհն. Բաղդասարյան այցելեցին վարժարանս։ Աշակերտներու մասնակցութեամբ կատարուեցաւ Տերունական Աղօթքը։ Լսուեցաւ աշակերտներու բարձր, համարձակ և գեղեցիկ ձայնով «Հայր Մեր»-ը և «Սուրբ Աստուած» շարականը որը զարմացուց ներկաներուն։
Անոնք գնահատեցին աշակերտներուն իրենց խօսքերով, որը ուրախութիւն և քաջալերանք պատճառեց։ Թող Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ մեր դպրոցի աշակերտներէն։

Usually and for different occasions, we get visits from the clergymen of our churches to convey their blessings, prayers, and the teachings of the Armenian Church to all the pupils of the school. On Sunday 13th May 2018 Our Primate, His Grace Bishop Hovakim Manukyan and Fr. Shnork Bagdassarian, Pastor of St Sarkis Armenian Church, visited Kevork Tahta Armenian Community Sunday School and presided over the Morning Assembly. The pupils confidently participated in reciting the Lord's Prayer and "Sourp Asdvaz" sharakan. His grace praised and encouraged the pupils and blessed them all. May God's blessings be always upon our children.


Հա՛յր մեր, որ յերկինս ես,
սո՛ւրբ եղիցի անուն Քո։

Եկեսցէ՛ արքայութիւն Քո։

Եղիցին կամք Քո
որպէս յերկինս՝ եւ յերկրի։

Զհաց մեր հանապազորդ
տո՛ւր մեզ այսօր։

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք
թողումք մերոց պարտապանաց։

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։

Զի Քո է արքայութիւն
եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս. ամէն։

Մարզական Օր - Sports' Day

Մայիսի 20-ին տեղի ունեցաւ վարժարանիս մարզական օրը: Այս աւանդութիւն դարձած միջոցառում է, որուն կը մասնակցին բոլոր աշակերտները՝ իրենց տարիքային կարողութեան համեմատ առաջադրուած վարժութիւններ յաղթահարելով: Աշակերտութիւնը բաժնուած է երեք խումբերու՝ կարմիր Անի, կապոյտ Վան եւ նարնջագոյն Կարս եւ իւրաքանչիւր աշակերտ կը մրցի անձնական եւ խմբային նիշեր հաւաքելու նպատակով: Մի քանի շաբաթէ ի վեր արդէն ցանկացող մանուկները ճատրակի մարտերով մրցած էին ճաշի զբօսանքի ատեն: Ասոնց աւելցան վազքի տարբեր ձեւերու մրցումները, որոնք մեծ աղմուկով եւ խանդավառութեամբ պատեցին դպրոցին սովորաբար խաղաղ մթնոլորտը: Պզտիկները հայերէնով կը քաջալերէին իրենց ընկերներուն, իրենց գոյնին պատկանող մասնակիցներուն եւ ինչու չէ, նաեւ իրենց ծնողքին, որոնք մասնակցեցան մրցումին եւ մարզական ոգու օրինակ դարձան մատղաշ սերունդին համար: Այս հաճելի, եռանդուն եւ զուարճալի օրուան աւարտին, Տնօրէնուհի Տիկին Ռ Թաթուլեան բաժնեց կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն խումբերու առաջին, երկրորդ եւ երրորդ դիրք գրաւողներուն վկայագրերը եւ մեդալները: Մեր երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը կը յայտնենք ուսուցչուհիներուն՝ ի մասնաւորի տիկին Այդա Եղիկեանին, հոգաբարձուներուն, օգնականներուն եւ բոլոր մասնակցողներուն:

Our traditional Sports' Day took place on 20th May. All pupils who are divided into three houses: Red Ani, Blue Van and Orange Kars participate in different races and challenges according to their age, trying to score points for their team and win individual race.

Chess competitions had been ongoing for many weeks during the lunch break, and our budding chess-players displayed excellent abilities. On Sports' Day, everyone took part in various races, being cheered on in **Armenian** by their team-mates creating an exciting atmosphere in an otherwise peaceful school. Many parents also ran in the Parents' Race, acting as role models for sportsmanship to all children.

At the end of this exciting event, head teacher Mrs Ruzanna Tatulyan handed out Participation Certificates to all pupils and medals for first, second and third place winners

Special thanks to our teachers, especially to Mrs Aida Yeghikian, who organised and coordinated the event as well as all who helped and participated in this exciting event.

Մարզական Օրէն տեսարաններ

Դաշտահանդէս – School's Annual BBQ

Ամառուայ առաջին կիրակի օրը, Յունիսի 24-ին տեղի ունեցաւ դպրոցիս տարեկան դաշտահանդէսը: Առտու կանուխէն արդէն կազմակերպողները գործի վրայ էին, կատարելով դպրոցի ընկերային օրացոյցին համար ամենակարեւոր միջոցառման բոլոր պատրաստութիւնները: Դասերու աւարտէն յետոյ աշակերտները, ուսուցչական կազմը եւ ծնողքը հաւաքուեցան դպրոցին ճաշարանին սրահը եւ անոր կից բակը՝ ճաշակելու ախորժաբերներ, խորոված, աղցաններ եւ անուշեղէններու լայն տեսականի մը:

Անպակաս էր հայկական երաժշտութիւնն ու պարը, ինչպէս նաեւ մանուկներուն համար կազմակերպուած խաղերը եւ վիճակահանութիւնը: Բարեբախտաբար անգլիական օդը գթաց մեզի եւ օրը անցաւ շատ հաճելի եւ ջերմիկ ընկերային մթնոլորտի մէջ: Օրուան հանգանակուած գումարը մեծ օժանդակութիւն է դպրոցիս համար, որուն համար այն իր երախտագիտութիւնը կը յայտնէ տարիներու նուիրեալ ծնողական յանձնախմբի անդամներուն եւ հոգաբարձութեանը:

Դաշտահանդէս – School's Annual BBQ ...

Our school's annual BBQ took place on the first Sunday of Summer, June 24th. The organisers and helpers were busy since early morning preparing for one of the most important and popular event on our school's social calendar. After the day's lessons, all pupils, parents and teachers gathered in the dining area and the adjacent patio to savour salads, starters, kebab and desserts especially prepared by the Parents' Committee. There were also games and entertainment for the younger ones, Armenian music and dance, as well as the traditional raffle and tombola. There was a beautiful and happy family atmosphere and the weather helped in making the event a success. The money raised on the day is a big help for the school which recognises the great efforts of the dedicated Parents' Committee and would like to thank every member and all the helpers for their support of this event and the school.

9րդ Դասարանի Աւարտական Քննութիւնները - Final Exams

Աւարտական դասարանի աշակերտները Մարտին մասնակցեցան **հայերէն լեզուի GCSE-ի համարժեք մակարդակի քննութիւններուն** որ կը ստուգեն գրել, կարդալ եւ խօսելու կարողութիւնները: Միացեալ Թագաւորութեան մէջ հայերէն լեզուի GCSE-ի թեկնածուներու սակաւաթիւ քանակին պատճառով, մեր քննութիւնները չեն պատրաս-տուիր Անգլիոյ քննական խորհուրդներու կողմէ եւ հետեւաբար, պաշտօնական ճանաչում չունին: Սակայն, տարիներու փորձառութիւնը ցոյց կու տայ որ դպրոցէն ներս աշակերտներուն ստացած ուսումը եւ քննութեան վկայականը մեծ հիացմունք եւ հետաքրքրութիւն կ՝առաջացնեն անգլիական բարձրագոյն կրթութեան բուհերուն մէջ՝ հայ երիտասարդներուն դիմումները քննարկելու ատեն:

This year, just before the Easter holidays, our final year students were assessed in their Armenian language skills for reading, writing and speaking. The exam we offer is modelled on the GCSE format. Unfortunately, examination boards are unable to offer an officially recognised Armenian language GCSE qualification, therefore we have to run our own internal assessment, which is almost identical in format and criteria to the 'real' GCSE's.
We know that whenever our students mention their attendance to Armenian school and their qualification in their UCAS statements, they get very positive feedback from Universities' admissions departments, who find this impressive and an asset for the candidate.

Նաւապտոյտ՝ Պր Շահէ Կիւլեանի Հետ

Մէկ անգամ եւս, հաճելի աւանդութիւն դարձած Պր Կիւլեանի նաւակով պտոյտը տեղի ունեցաւ Շաբաթ օր, Յուլիսի 14-ին: Առտուայ ժամը 11-էն, արեւմտահայ եւ արեւելահայ բարձր դասարաններու աշակերտները եւ ուսուցչուհի-ները հանդիպեցան նաւահանգիստին մօտ, ուր կազմ-պատրաստ կը սպասէր «նաւապետ» Կիւլեանը: Երիտասարդները խանդավառ տրամադրութեամբ նստեցան նաւակ, որ Լոնտոնի Grand Canal ջրանցքով մէկ ժամուայ պտոյտ կատարեց: Օգտուելով իրենց բջջային հեռաձայներու ձայնային դիւրութիւններէն, անոնք հայկական երգեր երգեցին, ներառեալ աւարտական հանդէսին իրենց երգած՝ Հէյ ջան Թահթայեան՝, Տիկ Թամար Մինասեանին յօրինած երգը: Կէսօրուան ճաշի դադար ունեցան ջրանցքի ափին գտնուող աւանդական անգլիական «փապ»ի մը մէջ:

Պր Կիւլեանը հիւրասիրեց բոլորին՝ երիտասարդներուն նախընտրած ճաշատեսակներով, որու ընթացքին կենացներ խմուեցան հիւրընկալողին, աշակերտներուն եւ հայկական դպրոցին հասցէին:

Դարձեալ նաւ նստեցանք եւ ուղղուեցանք դէպի կանաչապատ դաշտ մը, ուր բոլոր ներկաները առիթ ունեցան ճաշը մարսելու՝ rounders-ի խաղերու մասնակցելով: Ջրանցքի ափին թէյ եւ խմորեղէն համտեսելէ ետք, ժամը հասաւ նաւահանգիստ եւ ապա տուն վերադառնալու:

Աշակերտներուն համար մեծ ուրախութիւն էր այդ օրուայ ծրագիրը, որ ամրապնդեց իրար միջեւ բարեկամական կապերը եւ ինչու չէ, հայկական ոգին: Մեծ գոհունակութիւն եւ երախտագիտութիւն յայտնեցին բոլորը մեր ազնիւ հիւրընկալին:

Once again our final year's students and their teachers were treated to a boat trip along the Grand Union Canal on Saturday 14 July.

The pupils played Armenian music on the boat, and sang the newly adapted song 'Hey jan Tahtaian' (lyrics by Mrs Tamara Minasian) which for a few hours created an Armenian 'sailing' atmosphere and was even cheered by barges that passed us by. The group were invited to have lunch at a pub by the canal, followed by games and refreshments.

The children appreciated Mr Gulian's gesture and this outing served as a further bonding experience for them.

Ամավերջի Հանդէս – End of Year Concert

Կիրակի Յուլիս 8-ին, տեղի ունեցաւ Վարժարանիս ամավերջի եւ վկայականաց բաշխման հանդէսը: Այս տարի այն նուիրուած էր Սարդարապատի հերոսամարտին եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակին, Երեւանի հիմնադրման 2800-ամեակին եւ Գ. Թահթայեան Վարարանին 40-րդ յօբելեաններուն: Աշակերտները հանդէս եկան ասմունքով, երգով, պարով եւ թատերգութեամբ, մեծ ուրախութիւն եւ հպարտանք պատճառելով իրենց ծնողքին եւ հարազատներուն:

Վկայականներու բաշխման արարողութեան, դպրոցիս տնօրէնուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանի կողքին մասնակցեցան նաեւ Մեծն Բրիտանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչ՝ օր. Հայարփի Դրմէյեան, ինչպէս նաեւ Սբ Եղիշէ եկեղցուոյ ծխական հովիւ՝ Տէր Նշան քահանայ Ալավէրդեանը: Իր պատգամը եւ շնորհաւորական խօսքը փոխանցեց նաեւ Հայաստանէն ժամանած, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի տնօրէն Դոկտոր Աշոտ Մելքոնեանը: Ապա մեր շրջանաւարտները իրենց ուղերձներով հանդէս եկան, եւ իրենց սէրն ու զգացմունքները արտայատեցին սիրելի դպրոցին հանդէպ, յուզուելով եւ յուզելով ներկաներուն:

This took place on 8 July; it was an afternoon full of recitation, song, dance and theatrical performance, which filled the parents with joy and pride.

Echoing the Centenary of the heroic victory of Sardarabad and the creation of the First Republic of Armenia, the 2800 anniversary of the foundation of the city of Yerevan and of course the 40th anniversary of the establishment of our K. Tahta Armenian Sunday school, speeches were made by the school head Mrs Ruzanna Tatulyan, the representative of the Armenian Embassy in the UK Miss Hayarpi Drmeyan, the St Yeghishe Church parish priest, Deacon Nshan Alaverdyan and finally our special guest from Armenia, the director of the History Institute of the Academy of Sciences of the Republic of Armenia.

Finally a few graduating students shared their thoughts and feelings about their 11-year journey through this school, vowing to return as assistant teachers, or even bring their children when they become parents!

Ամավերջի Հանդէսէն տեսարաններ

Armenian Street Festival

Our school's table at the Armenian Street Festival on 15th July in Ealing London

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Լոնդոնի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի 40 ամեակը

Լոնդոնի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանը այս տարի՝ 2018 թուականին, տօնում է իր հիմնադրման 40 ամեայ յոբելեանը:

Վարժարանն հիմնադրուել է 1978 թականին Բրտանահայ Համայնքային և Եկեղեցական խորհրդի հովանաւորութեամբ և Գևորգ Թահթայի բարերարութեամբ:

Վարժարանն իր գործունէութեան 40 տարիների ընթացքում դարձել է կայացած կրթական հաստատութիւն, որտեղ սովորել են հայոց լեզու և հայեցի կրթութիւն են ստացել հարիւրաւոր բրիտանահայ երեխաներ:

Վարժարանն ունի 3 բաժիններ, որտեղ աշակերտները հաճախում են հետևեալ կարգով

- մանկապարտէզ 3-ից 5 տարեկան
- նախադպրոցական 5-ից 7 տարեկան
- դպրոցական 7-ից 16 տարեկան

Վարժարանում դասընթացները անցկացուում են արևմտահայերէն, արևելահայերէն դասական և հայաստանեան ուղղագրութեամբ:

Վարժարանն ունի իր կայացած կրթական ծրագիրը և աշակերտները 9-րդ դասարանն աւարտելիս յանձնում են աւարտական քննութիւն, որը համապատասխանում է անգլիական կրթական համակարգի GCSE-ի մակարդակին:

Ուսումնական ծրագրի մաս են կազմում յատուկ հանդիսութիւնները՝ նուիրուած մեր պատմական կարևոր դէպքերին. Սեպտեմբերի 21-ին, Թարգմանչաց տօնին, Վարդանանց հերոսամարտին, Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Վարժարանում նշում ենք նաև Կաղանդը, Մայրերի օրը, Զատիկը և ուսումնական տարին աւարտւում է աշակերտների մասնակցութեամբ հանդէսով:

Աշակերտների մասնակցութեամբ մեծ շուքով տօնել ենք Տիգրան Մեծի 2150 ամեակը, Անի մայրաքաղաքի 1050 ամեակը, Յովհաննէս Այվազովսկու 200 ամեակը, Գևորգ Բաշինջաղեանի 150 ամեակը, Յակոբ Պարոնեանի 174 ամեակը:

Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի 100 ամեայ տարելիցի առթիւ վարժարանը Բրիտանահայ համայնքի համար բեմադրեց Գևորգ Թահթայի "Այսպէս ապրեցանք" գիրքը և "Սասունցի Դավիթ" էպոսը: Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման 25 ամեակի առթիւ ամավերջին հանդէսին աշակերտները ներկայացրին Գևորգ Էմինի "Հաւերժի Ճամփորդը" ստեղծագործութիւնը: Այս տարի Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի 103ամեայ տարելիցի առթիւ բեմադրեցինք Պերճ Զեյթունցեանի "Ոտքի դատարանն է գալիս" պիեսը: Վարժարանի 40 ամեայ յոբելեանի առթիւ բեմադրելու ենք Սարուխանի "Մենք հայերէն չենք գիտէր" պիեսը և այլն. . .

Լոնդոնում հայ ազգային ինքնութեան պահպանման ու զարգացման, սերունդների հայեցի կրթութեան և դաստիարակութեան, հայապահպանական ծրագրերի իրականացման գործում նշանակալի աւանդի համար Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միայն հայոց լեզու և հայկական մշակոյթ փոխանցող կառոյց չէ այլ մեր երեխաների սրտերում հայրենասիրութեան հունդեր սերմանող, հայ ինքնութեան և հայկական մթնոլորդ պահող սրբազան օջախ է:

Վարժարանն 2010 և 2017 թականներին արժանացել է ՀՀ Սփիւռքի նախարարութեան **"Լաւագոյն հայկական կրթօջախ"** մրցանակներին: Քառասունամեայ գործունէութեան ընթացքում վարժարանն իր անջնջելի հետքն է դրոշմել լոնդոնահայ համայնքի կեանքում:

Շնորհաւորում ենք Վարժարանի բոլոր աշակերտներին, ծնողներին, ուսուցչական կազմին, ծնողական յանձնախմբի անդամներին, հոգաբարձուներին, խնամակալներին, նուիրատուներին, Վարժարանի ներկայ և անցեալի բոլոր նուիրեալներին մեր սիրելի կրթօջախի հիմնադրման 40 ամեայ յոբելեանի առթիւ:

Եկե՛ք, բոլորս միասնաբար աշխատենք, սովորենք, պահենք և պահպանենք մեր լեզուն, մեր դարաւոր մշակոյթը, պատմութիւնը, կրոնը և մեր հայի ոգին:

K Tahta Armenian Community Sunday School's 40th Anniversary

In 2018 K Tahta Armenian Community Sunday School celebrates its 40th anniversary. The school was founded in 1978 under the auspices of the Armenian Community and Church Council of Great Britain and the benefactor-philanthropist Kevork Tahta. During the past 40 years, the school has become a reputable educational establishment.

Our pupils have the opportunity to learn the Armenian language and develop an appreciation of our rich Armenian culture, as well as learning how to be good citizens and make a positive contribution to society.

The Sunday School offers parallel classes both in Eastern and Western Armenian to pupils aged between 3 and 16 years old, and it is composed of the following three sections: (1) Nursery Section (two years), (2) Pre–academic Section (two years), and (3) Academic Section (nine years).

Classes are also offered to adults wishing to learn either Eastern or Western Armenian.

The Sunday School's curriculum covers various aspects of the Armenian language, namely reading, writing, conversation and grammar. Pupils are also taught about important events in the Armenian history, and they learn Armenian songs and dances.

The school has academic programme and at the end of year 9, students are ready to take GCSE equivalent examination in Armenian language.

The special events dedicated to Armenian history and culture are part of the educational programme: September 21, Holy translator's day, the Battle of Vartanans, April 24 the Armenian Genocide commemoration day. At school we celebrate Christmas, Mothers' day and Easter. At the end of each academic year our students present various performances.

Here is the list of performances that our students presented at the End of Year Assembly and for community:

- The 2150 anniversary of Tigran the Great, king of Armenia
- The 1050 anniversary of Ani, ancient capital of Armenia
- The world of fairy tales, where pupils presented different fairy tales by Hovhaness Tumanian
- 200 anniversary of Armenian famous marine painter Hovhannes Aivazovsky
- 150 anniversary of the great Armenian painter Gevorg Bshinjankhian
- 174 anniversary of the great Armenian writer Hagop Baronian.
- Commemoration of the 100th anniversary of the Armenian genocide, the school presented the epic poem "David of Sassoun " and K Tahta's family story
- 25th anniversary of Armenia's Independence - our pupils presented "The traveller to Eternity"- "Հաւերժի Ճամփորդը" by Gevorg Emin.
- Commemoration of the 103rd anniversary of the Armenian genocide, the school presented "Stand up the court is coming" by Perch Zeytuntsyan.
- and more...

K Tahta Armenian Community School is not only teaching Armenian language and culture; it is an environment for preserving the Armenian identity, where teachers plant the seeds of love for our Fatherland in our children.

In 2010 and 2017 the K.Tahta Armenian Community Sunday School has been awarded two prizes by Fatherland for the preservation of Armenian identity and language in the Diaspora.

The prizes have been awarded jointly by the Ministry of Diaspora of the Republic of Armenia and the World Armenian Congress, K.Tahta Armenian Community Sunday School has been nominated as winner in the category of "The best Armenian Educational Establishment in Diaspora".

We are congratulating our students, parents, teachers, members of parents' committee, governors, trustees, all benefactors for 40th anniversary of the school.

Let's work together, preserving our language, our culture, our history, faith and our Armenian spirit.

2018-2019 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 10 Սեպտ. 2018 – 10 Դեկտ. 2018 Term I 10 September 2018 – 10 December 2018	
9 Սեպտեմբեր 9 September	Վերամուտ Back to school
13 Հոկտեմբեր 13 October	40 ամեակին նուիրուած հանդիսութիւն 40th Anniversary Celebration
21 Հոկտեմբեր 21 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
28 Հոկտեմբեր 28 October	Արձակուրդ Half-Term Break
25 Նոյեմբեր 25 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
16 Դեկտեմբեր 16 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 13 Յունուար 2019 – 7 April 2019 Term II 13 January 2019 – 7 April 2019	
9 Փետրուար 9 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
17 Փետրուար 17 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
24 Փետրուար 24 February	Արձակուրդ Half-Term Break
31 Մարտ 31 March	Մայրերու Օր Mothers' Day
7 Ապրիլ 7 April	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 5 Մայիս 2019 –7 Յուլիս 2019 Term III 5 May 2019 – 7 July 2019	
19 Մայիս 19 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
26 Մայիս 26 May	Մարզական Օր Sports' Day
23 Յունիս 23 June	Դաշտահանդէս School BBQ
7 Յուլիս 7 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Մարիանա Ասմինեան, Տիկ Հրանուշ Աթանոսեան , Տիկ Զուարդ Ստեփանեան,
Տիկ Թամար Նալբանդեան եւ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան